



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2146

~~Կոստան Դուլ.~~

~~Զեմլիկ Ինյուսի Կոբ~~  
արկարճատիբ

~~Պապոսյի Ինյուսի գաղտնիք.~~

82

9-73

2 NOV 2009

Ա. ԳԱՆՈՆ ՏՕՅԼ



# ՇԵՐԼՕՔ ՀՕԼՍՄԻ ՆՈՐ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ՔՂԳՄ. Ժ. Շ.

ՅԻԻ 2

ՊՕՍՔՕՍՄԻ ՀՈՎԻՏԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ



Շերլոկ Հոլմս գրքի պ...

82

Ո-73

### ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՅ ՄԸ

Շէրթք Հօլմս ու եովառարանքն քով, դէմ դէմի նստած էինք Պէյքըր Սթրիթի հանրածանօթ յարկարաժնին մէջ, երբ լուսթիւնը խղեց և սա փիլիսոփայական խօսքը ըսաւ ինձի.

— Կեանքը լեցուն է այլանդակութիւններով, զորս ամէնէն հնարագիւտ միաքը չի կրնար երեւակայել և որոնք ոակայն ընթացիկ դրամ են մեր գոյութեան մէջ: Եթէ, պատահանը բանալով, կարենայինք երկուքս ալ թռչիլ, սա մեծ քաղաքին վրայ սաւառնիլ և տանիքները գաղտնապէս վերցնել ակնարկ մը նետելու համար անոնց ներքեւ տեղի ունեցած տարօրինակ դէպքերուն վրայ, սրչափ անակնկալներ պիտի սպասէին մեզի: Բոլոր վէպերը իրենց յօրինուածքով, իրենց նախատեսուած եզրակացութիւններով անհամ և հինցած պիտի երեւային մեզի տարօրինակ զուգադիպութիւններու, մուսլ ծրագիրներու, հակասական սիսթէմներու, մէկ խօսքով՝ իրողութիւններու այն զարմանալի շարքին քով, որ դարերու ընթացքին իրարու կը յաջորդեն և ամէնէն անհաւանական արդիւնքներուն կը յանգին:

— Ես ձեր կարծիքէն չեմ, պատասխանեցի: Դատերը, որոնց տեղեկատուութիւնը կը կարգանք լրագիրներուն մէջ, ընդհանրապէս հասարակ և շահեկանութենէ զուրկ բաներ են Իրապաշտութիւնը անոնց մէջ մինչեւ իր յետին սահմանները կը մղուի և վախճանը ոչինչ ունի արուեստագիտական և հրապուրիչ:

— Նոյն իսկ իրապաշտութեան մէջ ընտրութիւն մը պէտք է ընել, ըսաւ Հօլմս: Ասիկա է որ կը պակսի սոսփկանական տեղեկագիրներուն մէջ, ուր աւելի կարեւորութիւն կ'ընծայուի գատաւորին խօսքերուն քան թէ մանրամասնութիւններու, որոնք դիտողի մը համար գործին էութիւնն իսկ են: Հաւատացէք ինձի, հատարակ դէպքերէն աւելի պարզ բան չկայ:

Դրուխտ երեքցուցի թերահաւատ դէմքով մը:

— Կատարելապէս կը հասկնամ կարծիքի մեր անհամաձայնութիւնը: Դուք երեք հողամասերու բոլոր յուսանաաններուն «ամաթէօ» խորհրդականը, գերագոյն տպաւէնն էք:

8474-76

Ուստի խիստ բնականօրէն կը գտնուիք ամէնէն այլանդակ, ամէնէն տարօրինակ բաներու հանդէպ, որոնք կրնան պատահիլ աշխարհի մէջ: Բայց փորձ մը ընենք, աւելցուցի ակնարկ մը ձգելով առտուան թերթին վրայ, որ գետինը ինկած էր: Ահաւասիկ առաջին էջին վրայ, գլխաւոր յօդուածը. «Ամուսինի մը անգլիոթիւնը իր կնոջ հանդէպ»: Պատմութիւնը ամբողջ սխնակ մը կը բռնէ, բայց ես առաջուրնէ գիտեմ պարունակութիւնը: Անշուշտ կայ կնոջ պատմութիւն մը, գիտով մը, կռիւ մը, հարուածներ և վէրքեր, քոչք մը կամ կարեկից սեփականատէր մը: Ամէնէն իրապաշտ հեղինակը աւելի անմարտելի բան մը պիտի չհնարէր:

— Իրաւ: Է՛լ ուրեմն, այդ օրինակը ձեր տեսութեան ոչ մի տար, բնաւ Հօլմս լրագիրը առնելով և աչքէ անցընելով: Տէ՛օնտաներու բաժանման գործն է և նոյնիսկ աշխատած եմ լուսաբանել անոր հետ առնչութիւն ունեցող գէպքերը: Ամուսինը ժուժկալներու ընկերակցութեան մը կ'անդամակցէր ու ո՛ր է կին խառնուած չէր գործին: Իրեն դէմ եղած ամենամեծ դանդաղը իր մտութիւնն էր, որով ամէն ճաշէ ետք ատամնաշարը կը հանէր և կնոջը երեսին կը նետէր: Պիտի ընդունիք թէ ո՛չ մէկ վիպագիր խելք պիտի ընէր այդպիսի ամբաստանութիւն մը հնարելու: Քիչ մը քիտախոտ առէք, տորթնա՛ր, և խոտտովանեցէք թէ պարտուած էք:

Ինձի երկնցուց տուփը, սակի՛ւ ճշմարիտ գոհար մը, ուրուն կեդրոնը կը գտնուէր հիանալի մեղեծիկ մը (ճեպկլիֆու՛մ): Այս գեղարուեստական առարկան անշուշտ կը հակառէր բարեկամիս պարզատրութեանը և խոտամբեր կեանքին, որ չկրցայ ակնարկութիւն մը չընել այս մասին:

— Ա՛հ, կը մտնայի: Բնաւ, թէ քանի մը շաբաթ անցուցած եմ օտար երկրի մը մէջ և դայս տուփը ստացած եմ իբրև երախտադիտութեան բարեցածող օժանդակութեան հօ՛ւն Ասլէնի թուղթերուն գործին մէջ:

— Հարա ոս մատանի՛ն, աւելցուցի, մտտին վրայ փայլող խիստ գեղեցիկ մէկ ազամանդը ցոյց տարով:


— Ասիկա Հոլանտացի արքայական տունին մէկ նուէրն է, բայց խիստ փափուկ պարագաները, որոնց խառնուեցայ, պատք կը դնեն վրաս բացարձակօրէն գազանապահ ըլլալ նոյն իսկ հանդէպ ձեզի, որ բարեհաճած էք իմ յաջողութիւններէս մէկ քանին պատարակել:

— Այս միջոցին գործ ունի՛ք, հարցուցի հեռաքթիք:

— Ուսումնասիրելիք տասը կամ տասներկու գործ ունիմ, որոնց մէջ ճշմարտապէս շահեկան մէկ հատ իսկ չեմ գտնիր: Գէկ հասկցէք.— անոնք լուրջ են, առանց ամենափոքր իսկրտապութիւն մը ներկայացնելու: Դիտած եմ որ ամէնէն աննշան գէպքերը երբեմն առատ նիւթ կը մատակարարեն դիտողութեան և պատճառի ու արդիւնքի այն արագ վերլուծումին, որ ա՛յնքան տենդալաւա կ'ընէ ամէն հեռագօտութիւն: Ամէնէն մեծ ոճիրները յաճախ ամէնէն պարզերն են, վասնզի շարժառիթը շատ բացայայտ է: Դատերը, գորս կ'ուսումնասիրեմ այս պահուս, շահեկանութիւն մը չեն ներկայացներ, բաց ի սակայն միւսներէն աւելի կնճռոտ գործէ մը, որու մասին խորուրդ հարցուեցաւ ինձի Մարտիլոյ մէջ: Բայց անշուշտ աւելի զբաղած պիտի ըլլամ քանի մը վայրկեանէն, վասն զի՝ եթէ չեմ սխալիր, անաւասիկ յաճախորդներէս մէկը:

Ուրի ելած էր և պատուհանէն, որուն փեղկերը կիսաբաց էին, կը դիտէր ինչ որ տեղի կ'ունենար մթազին և մեյլամաղձոտ փողոցին մէջ, ինչպէս են Լոնտոնի բոլոր փողոցները ուսին վրայէն ակնարկ մը ձգեցի և դիմացի մայթին վրայ ըր: տեսայ բարձրահասակ և ուժեղ կին մը, որ վիզին շուրջ խոշոր մուշտակ մը կը կրէր: Վայելչօրէն վեր գարձած լայն եղբրքներով և դքսուհի Տրվընշայրի սճով զլխարկը գարգարուած էր խոշոր փետուրով մը, որ ականջին վրայ կ'իջնար: Դիտեցի որ այս հոյակապ գլխարկին տակ կիտովին ծածկուած աչքը մեր պատուհաններուն սեւեռած էր և մատները, որ մեքենաբար զբաղած էին ձեռնոցներուն կոճակները քակելու և դնելու, արտասովոր ջգայնութիւն մը կը յայտնէին: Յանկարճ շակուեցաւ և, մէկ մայթէն միւսը ցատկելով, խոյացաւ դանդակին վրայ, զոր հնչեցուց ուժղօրէն:

— Կը ճանչնամ այս ակտանիչերը, բնաւ Հօլմս, սիկառը՝ կրակին մէջ նետելով: Այդ վարանու մը «սիրտի խնդիր»ի նշան է միշտ: Խորհուրդ մը կ'ուզէ, բայց նիւթը շատ փափուկ կը գտնէ երրորդի մը յայտնելու համար: Եւ սակայն ատոր մէջ ալ երանգներ կան: Երկի մարդու կողմէ ծանրապէս խարուած կին մը երբեք չի վարանիր: Զանգակին շուտանէ կը կախուի և կը փրցնէ զայն: Հոս սիրար վիրաւորուած է,



211 276

կինը աւելի վարանոտ և վաշահար է քան թէ զայրացած : Բայց անաւատիկ եկաւ ու պիտի պատմէ մեզի :

Ոսքը աւարտած չէր երբ դուռը զարնուեցաւ և սպառաւորը ներ մտաւ , ծանուցանելով Օր . Մէրի Սըթըրլէնտը , որ յառաջացաւ շքեղօրէն :

Շէրլօք Հօլմս գինքը յատկանշող սիրուն քաղաքավարութեամբ ընդունեց զայն : Յետոյ դուռը գոցած և այցելուհին հրաւիրած ըլլալով նստիլ թիկնաթոռի մը վրայ , ուսումնասիրեց զայն իր ամենայնոք մանրամասնութիւններուն մէջ , բայց անուշադիր երեւոյթով մը , զոր կ'ունենար այս պարագաներուն մէջ :

— Կարճատես ըլլալնուդ համար գիրի մեքենան կը յողնեցնէ ձեզ , ըսաւ անոր :

— Նախապէս յոգնութիւն զգացի , բայց հիմա կը դրեմ առանց նայելու թէ ո՛ւր կը գտնուին գիրերը , պատասխանեց :

Յանկարծ օւժգին ոտուով մը ըրաւ աթոռին վրայ : Զուարթ դէմքը ստսկում և զարմանք արտայայտեց Հօլմսի խորհրդածութեան վրայ :

— Կասկած չկայ թէ իմ խօսքս լսած էք , պարո՞ն , ըսաւ , և կամ թէ կախարդ էք :

— Կարեւորութիւն չունի , ըսաւ Հօլմս . ինչպէ՞րով , իմ գործս է միշտ աղէկ տեղեկութիւն առնել , Ամէն բան գիտելու սովորութիւնս ուրիշներուն աչքէն վրիպած բաները տեսնել կուտայ ինծի : Ապա թէ ոչ ինչո՞ւ խորհուրդ պիտի հարցնէիք ինծի :

— Տիկին էթերէկն էր որ հոս զրկեց զիս : Կը յիշէ՞ք թէ ամէն մարդ , ոտիկանութիւնն ալ միասին ըլլալով , կը կարծէր թէ անոր ամուսինը մեռած է , բայց դուք վայրկեանապէս գտաք զայն : Օ՛հ , Մր . Հօլմս , երանի թէ իմ գործիս մէջ ալ յաջողէիք : Ես հարուստ չեմ : Ընդ ամէնը չորս հազար սօկիի եկամուտ ունիմ , առանց հաշուելու ընդօրինակութեան աշխատութիւնով շահած դրամս : Է՛՛ ուրեմն , բոլոր ունեցածս կուտամ գիտնալու համար թէ ի՞նչ կըլած է Մր . Հօլմս մըր էնճըլ :

— Ըսէք նայիմ , հարցուց Հօլմս աչքերը ձեղունի վրայ սեւեռած ու մատները սեղմած , իր մոլութեան համեմատ , ըսէք նայիմ ինչո՞ւ այդպիսի խելայեղ վիճակով դուրս ելաք ձեր տունէն :

Օր . Մէրի Սըթըրլէնտի քիչ մը տարտամ նայուածքը սարսափի արտայայտութիւն մը առաւ :

— Սրդարեւ , ըսաւ , աճապարանքով դուրս ելայ տունէն , այսքան ծանր խնդրոյ մը մէջ հօրս՝ Մր . Ուինսթիպլէնքի ցոյց տուած անտարբերութենէն զայրանալով : Չուզեց ոտիկանութեան իմաց տալ , ո՛չ ալ ձեզ տեսնելու գալ : Նկատելով որ կը մերժէ ո՛ր և է ձեռնարկ ընել և շարունակ կը կրկնէ թէ վերջապէս չարիքը մեծ բան մը չէր , զայրացայ և զգետններս հաղնելով վազեցի ձեր տունը եկայ :

— Ձեր հօ՞յրը , հարցուց Հօլմս , ըսել կ'ուզէք ձեր խորթ հայրը , քանի որ ձեր մականունը չի կրեր :

— Այո՛ , խորթ հայրս : Հայր կ'անուանեմ ո՛րչափ որ տարօրինակ երեւայ ասիկա հանդէպ մարդու մը , որ հինգ տարու և հինգ ամսու միայն մեծ է ինձմէ :

— Մայրերնիդ ո՞ղջ է :

— Օ՛հ , 'այո՛ , և կատարեալ առողջութիւն մը ունի : Շատ դո՞ւ չմնացի տեսնելով որ հօրս մահէն քիչ ետքը վերամուսնացաւ մարդու մը հետ , որ գրէթէ 15 տարու պատիկ էր իրմէ : Հայրս կարարեղէնի գործով կը զբաղէր և կը բնակէր Թօթլէնէմ ֆուրթ Բօա : Մեռած ատեն աղւոր դրամագլուխ մը ձգեց , զոր մայրս շարունակեց շահագործել գործաւորներու պէտ Մր . Հէրրիի օգնութեամբ : Բայց գինիի գործով զբաղող և հետեւապէս իրմէ աւելի աղէկ դիրք ունեցող Մր . Ուինսթիպլէնքի ազդեցութեան ներքեւ , իր առեւարական գործը յաճախորդներով միասին ծախեց և իբրև դրամագլուխ ուշահոտացաւ 117,500 ֆր . , ինչ որ շատ վար է այն գումարէն , զոր հայրս պիտի ստանար եթէ ողջ ըլլար :

Կը կարծէի թէ այս անհեթեթ , որչափ անօգուտ պատմութիւնը Հօլմսի համբերութիւնը պիտի սպառէր , բայց զարմանքով տեսայ որ անիկա ամենաբուռն հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէր :

— Ձեր պատիկ հարստութիւնը այս վաճառումով դուրսացած է :

— Օ՛հ , ո՛չ , պարո՞ն , բոլորովին անջատ բան մըն է , քանի որ հօրեղբորս՝ Նիք Աւթլէնտի կողմէ ինծի կըլած կտակ մըն է , զոր կը ներկայացնեն հարիւրին 4½ տոկոս բերող Նոր—Ձերանտայի բաժնեթուղթեր : 62,000 ֆր . ի դրա-

մագրուխը անձեռնմխելի է և տոկոսները միայն կրնամ առնել :

— Շատ կը հեռաբարբէք զիս , ըսաւ Հօլմն : Եւ քանի որ ձեր եկամուտը տարին 2500 ֆր . է , առանց հաշուելու ասկէ գուրս ձեր շահած դրամը , միջոց ունիք պատիկ ճամբարդութիւններ կատարելու և շատ քմահաճոյքներ գոհացնելու : Ինծի կուգայ որ կին մը միայն կրնայ կատարելապէս ելլիլ գործին մէջէն 2500 ֆր . ի չափ եկամուտով մը :

— Ասկէ պակաս գումարով ալ հանդիստ կերպով պիտի ապրէի , Մր . Հօլմն , բայց կը համկնաք թէ ո՛րչափ ասին որ ծնողքին քով կը բնակիմ , չեմ կրնար և չեմ ուզեր անոնց վրայ բեռ ըլլալ , այնպէս որ եկամուտներս անոնց կը թուգուս : Մր . Ուինտիպէնք երեք ամիսը անդամ մը կտրօծնեալուս փոխարեքը կը զանձէ և մօրս կը յանձնէ : Գալով ինծի , ընդօրինակութիւններուս համար ինծի տրուած գումարով կը բաւականանամ : Մէկ թերթի համար 20 սանթիմ կ'առնեմ և օրը 15—20 թերթ կրնամ հանել :

— Շատ յստակ կերպով պարզեցիք ձեր կացութիւնը , ըսաւ Հօլմն : Ձեզ կը ներկայացնեմ բարեկամս՝ Տօքդ . Ուօթսրն : Կրնաք անոր առջեւ ալ աղատօրէն խօսիլ : Հաճեցէք ուրեմն Մր . Հօմբը Էնճըլի վրայ ձեր բոլոր գիտցածները ըսել մեզի :

Օր . Արթըրլէնտ թեթեւապէս կարմրեցաւ ու սկսաւ ժաքէթին ծագովը խաղալ ջղայնօրէն :

— Առաջին անգամ ըլլալով կաղապարներու պարահանգէսին մէջ հանդիպեցայ անոր , ըսաւ : Այդ արհեստակցութիւնը միշտ հրաւիրագիր կը զըկէր հօրս , իր սղջութեանը ատեն , ու կը շարունակէ հիմակ որ մեռած է ան , այնպէս որ վերջին օրերը մայրս այդպիսի հրաւիրագիր մը ստացաւ : Մր . Ուինտիպէնք չէր ուզեր որ այդ պարահանգէսին երթայիք : Միշտ կը հակառակի ո՛ր և բան ընդունելուս և սաստիկ կը դայրանար եթէ դպրոցական կիրակնօրեայ հաւաքոյթներուն երթայի : Բայց այս անգամ սրոյումս տրուած էր : Կ'ուզէի այդ պարահանգէսին երթալ : Ի՞նչ իրաւունքով պիտի արգիլէր զիս : Դիտել տուաւ մեզի թէ այդ պարահանգէսը գէշ կազմութիւն մը պիտի ունենար : Բայց ես այսպէս չէի կարծեր , վասնզի հօրս բոլոր բարեկամները ինն պիտի գանուէին : Աւելցուց թէ հագուստ չունէի , մինչդեռ կտրմիր

թաւիչէ չըջագգեստ մը ունէի , զոր բնաւ հաղած չէի : Վերջապէս , իր փաստերը սղառելով , ձրահաս գնաց , իր վաճառատան գործերը պատրուակելով : Մայրս ու ես պարահանգէս գացինք Մր . Հէրրոիի հետ , որ մեր զլխաւոր պաշտօնեանս եղած էր :

— Կ'ենթադրեմ թէ , ընդմիջեց Մր . Հօլմն , Մր . Ուինտիպէնք , ձրահասայէն դարձին , շատ բարկացաւ իմանալով որ այդ հանդէսին գացած էիք :

— Ամէն պարտապի մէջ շատ սիրուն վարմունք մը ունեցաւ : Ժպտեցաւ ուսերը թոթուելով և ըսաւ թէ կ'նոջմէ մը աւելի պինդ զլուխ բան չկար :

— Հասկցայ : Կ'ըսէիք ուրեմն թէ կաղապարներու այդ պարահանգէսին մէջ Մր . Հօմբը Էնճըլ անուն մէկու մը հանդիպած էիք :

— Այո՛ , պա՛րոն , այդ իրիկունը առաջին անգամ ըլլալով հանդիպեցայ անոր և յաջորդ օրը եկաւ հարցնելու թէ հանդիստ կերպով գարձած էիք : Յետոյ մենք , կամ մանաւանդ ես երկու անգամ զլուխ զլխի պտոյտ կատարեցի անոր հետ : Բայց խորթ հօրս վերադարձին պատճառաւ չկրցայ այլ ևս ընդունիլ Մր . Հօմբը Էնճըլը :

— Իրա՛ւ , և ինչո՛ւ :

— Ձեզի չըսի՞ թէ խորթ հայրս չէր ուզեր որ օտարականներու հետ տեսնուիմ : Կարելի եղածին չափ կը հեռացնէր զանոնք , պատրուակելով թէ կին մը պէտք է իր ընտանիքին ծոցին մէջ ապրելով բաւականանայ : Արդ՝ կը կրկնեմ ձեզի ինչ որ կ'ըսէի մօրս , այսինքն թէ կին մը պէտք է յարաբերութիւններ ստեղծէ , ինչ որ ես չուէի :

— Կ'աղաչեմ , Մր . Հօմբըի դատնանք : Երբէն ձեզ տեսնելու համար փորձ մը չըրա՛ւ :

— Որովհետեւ խորթ հայրս ութ օր ետքը ձրահաս պիտի գառնար , Մր . Հօմբը գրեց ինծի թէ աւելի խոհեմութիւն կը համարէք այդ մեկնումին սպասել , իրարու հետ տեսակցելու համար : Բայց Մր . Հօմբը ու ես կը թղթակցեալեք ու ամէն օր նամակ մը կ'ստանայի անկէ : Մայրս չէր կատակներ , քանի որ նամակները ես կ'ստանայի ու կը բաժնէի :

— Այդ միջոցին արդէն նշանուած էիք Մր . Հօմբըի հետ :

— Օ՛հ , այո՛ , Մր . Հօլմն , մեր առաջին պտոյտէն ետք

նշանուած էինք: Մը. էնձըլ Լիտէնձոյ Սթրիթի մէկ գրասենեակին մէջ արկղակալ էր և...

— Ի՛նչ գրասենեակ...  
— Աւա՛ղ, պա՛րոն, չեմ գիտեր:

— Ո՛ւր կը բնակէր այն ատեն:

— Գրասենեակին մէջ:

— Եւ դուք հասցէն չէ՞ք գիտեր:

— Ո՛չ: Սա՛ միայն գիտեմ թէ գրասենեակը Լիտէնձոյ Սթրիթի մէջ կը գտնուի:

— Բայց ձեր նամակները ո՛ւր կը ղրկէք:

— Լիտէնձոյ Սթրիթի թղթատունը, իր անունին: Ինձի կ'ըսէր որ եթէ նամակներս իր գրասենեակը ղրկուէին, պաշտօնեաները, կնոջական գիր մը տեսնելով, իրենց հեգնութիւնները պիտի չխնայէին: Այն ատեն առաջարկեցի գիրի մեքենայով գրել, ինչպէս որ ինք կ'ընէր, բայց մերժեց, պատրուակեով թէ իմ գիրս աւելի հաճոյք կը պատճառէր իրեն քան թէ այդ տպեալ գիրերը, գորս շատ հասարակ կը գտնէր: Ասիկա կը ցուցնէ թէ ո՛ր աստիճան կը սիրէ զիս, Մը. Հո՛րմս և թէ ո՛րչափ բարձր են իր զգացումները:

— Արդարեւ ասիկա խիստ թելադրիչ է, բայտ Հօլմս: Արդէն շատոնց հաստատած եմ թէ պզտիկ մանրամասնութիւնները ո՛ր աստիճան կարեւորութիւն ունին: Կրնա՞ք Մը. էնձըլի հետ տանչութիւն ունեցող ուրիշ մասնաւոր պարագաներ յիշել:

— Շատ երկչոտ մարդ մըն էր, պա՛րոն: Աւելի ազէկ կը սեպէր իրիկունները դուրս ելլել ինձի հետ, որպէսզի շատ չնշմարտի: Իր ձեւերուն մէջ զգուշաւոր էր և խիտա բարեկիրթ: Չայնն ալ շատ մեղձ էր: Երիտասարդութեանը ատեն փողացու մը ունեցած էր, որմէ մնացած էր կոկորդի խորին գիւրազգածութիւն մը, որ կը հարկադրէր զինքը ցած ձայնով խօսիլ: Թէև շատ պարզասէր էր, բայց միշտ վաչելուչ կերպով կը հաղուէր: Ինձի պէս կարճատես էր, ինչ որ կը պարտաւորէր զինք կապուց ահնոց գործածելու:

— Ձեր խորթ հօրը Ֆրանսոս բնակած միջոցին ի՛նչ պատահեցաւ:

— Մը. Հօմըր էնձըլ զիս տեսնելու եկաւ և առաջարկեց ամուսնանալ խորթ հօրս վերադարձէն առաջ, այսինքն

յաջորդ ուրբաթ օրը: Եւ այնքան հաւատացեալ էր որ Աւետարանին վրայ երդում ընել տուաւ ինձի թէ հաւատարիմ պիտի մնայի իրեն, ի՛նչ որ ալ պատահէր: Մայրս հաւանեցաւ անոր պահանջած այս երաշխաւորութեան, ինձի հանդէպ իր սիրոյն մէկ ապացոյցը տեսնելով անոր մէջ: Պէտք է ըսեմ ձեզի թէ սկիզբէն իսկ, մայրս միշտ քաջալերած է զայն ու նոյն իսկ աւելի գուրգուրանք ցոյց տուած է անոր քան թէ ինձի: Երբ ամուսնութեան համար այդչափ մօտ թուականի մը վրայ ինդիք եղաւ, հարցուցի թէ ի՛նչպէս պէտք էր չարժիլ խորթ հօրս հանդէպ: Մայրս և Մը. Հօմըր էնձըլ խորհուրդ տուին ինձի չզբաղիլ անով և ամէն բան լմննալէն ետքը միայն ծանուցանել անոր: Մայրս նոյն իսկ յանձնառու եղաւ գործը կարգադրել անոր հետ: Պէտք է խոստովանիմ ձեզի, պա՛րոն, թէ այս ծրագիրը կիսովին միայն կը հրապուրէր զիս: Իրաւ է թէ անկէ արտօնութիւն ուղեւ պէտք չունէի, քանի որ ինձմէ քանի մը տարու մեծ է միայն, բայց չէի ուզեր բան մը ընել զազտուկ կերպով: Ուստի որոշեցի անոր գրել Պօրտօ, ուր կը գտնուի իր ներկայացուցած վաճառատունին ֆրանսական մասնաճիւղը և նամակս ինձի դարձուեցաւ ամուսնութեանս առտուն իսկ:

— Ձեր նամակը իր հասցէն չէ՞ք գտած ուրեմն:

— Ո՛չ, պա՛րոն: Խորթ հայրս Անգլիա դացած էր իմ նամակիս իրեն հասնելէն քիչ առաջ:

— Ձեր ամուսնութիւնը ուրբաթ օրուան համար որոշուած էր: Եկեղեցիին մէջ պիտի կատարուէր:

— Այո՛, պա՛րոն, Ս. Փրկիչ եկեղեցիին մէջ, Բինկ'ս Բրօսի մօտ, սակաւաթիւ անձերու նեկայութեան: Յետոյ պիտի ճաշէինք Սէյնդ Բանքրէյս պանդոկին մէջ: Հօմըր կառքով եկաւ մայրս ու զիս առնելու համար: Մեզ երկուքս իր կառքին մէջ զբաւ ու ինք ալ կանչեց ուրիշ կառք մը,

— միակը որ կը գտնուէր փողոցին մէջ: Ամէնէն առաջ մենք հասանք եկեղեցիին առջև ու երբ մեզի հետեւող կառքը կեցաւ, ապչեցանք մնացինք պարապ գտնելով զայն: Կառապանը անմիջապէս ակոտակէն իջաւ և իր յաճախորդին բացակայութիւնը հաստատելով, յայտարարեց մեզի թէ անցած դարձածէն բան մը չէր կրնար հասկնալ, վաճառի իր աչքովը տեսած էր անոր կառք նստիլը: Ասիկա տեղի կ'ու-

նենար անցեալ ուրբաթ օր, Մր. Հօ'րմն, և անկէ ի վեր  
չտեսայ ու չլսեցի բան մը, որ կարենար նշանաժիտ հետքին  
վրայ զնել զիս:

— Ինձի կուգայ որ անարժան կերպով մը վարուած է  
ձեզի հետ, բաւ Հօրմն:

— Օ՛հ, ո՛չ, պո'րոն, շա'տ բարի, շա'տ ազնիւ է ու այդ  
կերպով չի լքաներ զիս: Ի՞նչպէս: Ամբողջ առտուն շարու-  
նակ պաղատած էր ինձի հաւատարիմ մնալ իրեն, ի՞նչ որ  
ալ պատահէր, նո'յնիսկ ամէնէն անակնկալ պարագային:  
«Մենք առ յաւէտ կապուած ենք, կ'ըսէր ինձի: Ասիկա եր-  
բէք չպիտի չմոռնամ և ուշ կամ կանուխ պիտի օգտուիմ  
անկէ»: Այս լեզուն տարօրինակ կ'երեւար ինձի ամուսնու-  
թենէն քանի մը ժամ առաջ, բայց հիմա կը բացատրուի:

— Անշո՛ւշտ: Ուրեմն կը կարծէք թէ Մր. Հօմբը էն-  
ճըլ ազէտի մը դո՞ն եղած է:

— Այո՛, պո'րոն, վտանգ մը նախատեսելուն համար է  
որ բաւ այն տարօրինակ խօսքերը, զորս պատմեցի ձեզի:

— Գազափար մը ունի՞ք թէ ի՞նչ տեսակ վտանգ մը կը  
սպառնար իրեն:

— Ո՛չ, բնաւ դազափար չունիմ:

— Ներքեզ որ հարցում մըն ալ բնեմ: Ձեր մայրը ի՞նչ-  
պէս ընդունեց այս դէպքը:

— Չայրացած էր և ինձմէ ինդրեց երբեք չխօսիլ այս  
տխուր գործին վրայ:

— Ձեր հո՞յրը: Անցած դարձածը պատմեցի՞ք անոր:

— Այո՛: Ան ալ մեզի պէս կարծեց թէ անշուշտ արկած  
մը պատահած էր Հօմբրի, բայց սպասովապէս անոր խօսքը  
պիտի լսէինք: Մարդ մը ի՞նչ նպատակով եկեղեցիին դուռը  
պիտի տանէր ու յետոյ այնտեղ պիտի լքանէր զիս: Ա՛հ, եւ  
թէ ինձմէ փոխ դրամ առած, հետո ամուսնացած, դրամա-  
գլուխս խրացուցած ըլլար, այն ատեն աւելի հակնալի պի-  
տի ըլլար: Բայց Հօմբը դրամի մարդ չէր և երբեք պիտի  
չուղէր նոյնիսկ չիլին մը ընդունիլ: Հիմա կը հարցնեմ ես  
ինձի թէ ի՞նչ կրնայ պատահած ըլլալ իրեն: Ինչո՞ւ չգրեց  
ինձի: Այս անստուգութիւնը կը խենթեցնէ զիս: Ա՛լ քունս  
չի տանիր: Վարկեան մը հանգիստ չունիմ:

Այստեղ Օր. Սթըրլինգն ապարտաւորուեցաւ ընդմիջել, վա-

սընդի հեծեծանքները կը խեղդէին զինք: Թաշկինակ մը հա-  
նեց և առատ արցունք թափեց:

— Ձեր գործը պիտի քննեմ, բաւ Հօրմն սաքի ելլելով,  
եւ համոզուած եմ թէ արդիւնք մը ձեռք պիտի բերենք:  
Վտանձ եղէք ինձի և ջանացէք այլևս չխորհիլ այս ամէնուն  
վրայ: Թո՛ղ Մր. Հօմբը ինձըլ անհետանայ ձեր յիշողութե-  
նէն, ինչպէս ձեր անձէն:

— Ի՞նչ է թէ այլևս պիտի չտեսնեմ զայն:

— Կը վախնամ թէ պիտի չտեսնէք:

— Ի՞նչ պատահած է ուրեմն իրեն:

— Յանձնատու կ'ըլլամ ասիկա քիչ ատենէն փմացելու  
ձեզի, բայց հիմակու հիմա պէտք է որ ունենամ անոր անձին  
մէկ մանրամասն նկարագրութիւնը և իր նամակներէն անոնք,  
զորս կը հաւանիք ձեռքէ հանել:

— Ծարաթ օրուան «Բրօնիք»ին մէջ ծանուցում մը տպա-  
գրել տուի, բաւ: Ահաւասիկ այդ ծանուցումը և իր շորս  
նամակները:

— Ծնորձակալ եմ: Հասցէնիդ ի՞նչ է:

— Յլ Լիօն Սթրիթ, Քէմպլբուէլ:

— Մր. Էնճըլի հասցէն ունեցած չէք բնաւ, այնպէս չէ,  
բայց ո՞ւր է ձեր խորթ հօր գրասենեակը:

— Խորթ հայրս առևտրական ներկայացուցիչն է Ֆէն-  
չըրշ Սթրիթի Ուէնսճառուգ Էնս Մէրպլէնքի, որ մեծաքանակ  
ներածուժով կ'ըրաղի:

— Ծնորձակալ եմ: Ասիկա կը բաւէ ինձի: Ձեր վկայու-  
թիւնը չատ բացորոշ է: Ձեր թուղթերը ձեզեզ ինձի և  
խորհուրդիս հետեւեցէք: Առ յաւէտ մտցէք այդ աղետալի  
անձը և թո՛ղ անիկա բնաւ չազդէ: Ընդհատապէս վրայ:

Ծնորձակալ եմ ձեր ազնիւ հոգածութեանը համար,  
Մր. Հօ'րմն, բայց չեմ կրնար համակերպիլ ատոր և հաւատա-  
րիմ պիտի մնամ Մր. Հօմբրի, որպէս զի գարձին պատրաստ  
գտնէ զիս իրեն պատկանելու:

Ասիկա համոզումի այնպիսի շեշտով մը լսուեցաւ որ այդ  
բարի ազջկան խիստ պարզ և միամիտ հաւատքը յարգելով,  
չհամարձակեցանք պատասխանել, իր դէմքին արտայայտած  
նուազ ուշիմութեանը հակառակ: Իր թուղթերը սեղանին  
վրայ դրաւ եւ մեկնեցաւ, խոստանալով նորէն զայ երբ լուր  
ըրկուէր իրեն:

Շէրլօք Հօլմս քանի մը վայրկեան լուռ մնաց, մասնե-  
րը սեղմած, սրունքները երկարած, ակնարկը յամառօրէն  
ձեղունին սեւեռած: Յետոյ իր յենարանէն վար առաւ հողէ  
հին ծխածորջը, որ ամէն ատեն իր խորհրդականն էր և դայն  
վառելով, աթոռին մէջ ընկողմանեցաւ: Շատ չանցած, ծու-  
խի ամպ մը շրջապատեց զինք, մինչ դէմքը ծայրայեղ մեղ-  
կութիւն մը կը ցոլացնէր:

— Խնդիրը հասարակ բան մըն է, ըսաւ Հօլմս, բայց  
աղջիկը ուսումնասիրութեամբ արժանի է: Նմանօրինակ պարա-  
զաներ տեսած եմ արդէն: Հաւաքածուս կը յիշատակէ այդ-  
պիսի պարագայ մը էտորվորի մէջ: Նոյն իսկ անցեալ տարի,  
Լա Հէյնի մէջ, նմանօրինակ բան մը տեղի ունեցաւ և խարէու-  
թիւնը ո՛րչափ ալ հին ըլլայ, այս տեղ սակայն դիտեցի բա-  
ցարձակապէս երկու նոր մանրամասնութիւններ: Բայց աղ-  
ջիկը ինք միայն ուսումնասիրութիւն մըն է:

— Ուրեմն անոր մէջ գտաք ինչ որ լացարձակապէս  
թաքուն մնաց ինծի համար:

— Պատճառը սա՛ է որ, Ուօթմարն, զուք դիտել, նոյն  
իսկ նայիլ չէք գիտեր և կարեւորութիւն մը ունեցող ամէն  
բան կը խուսափի ձեր ուշադրութենէն: Տակաւին չյաջողե-  
ցայ հասկնելու ինչ որ զգեստի թեւ մը կրնայ յայտնել և  
թէ ո՛ր աստիճան կրնայ թելադրական ըլլալ եղունգ մը կամ  
բթամատ մը և կամ հետեւութիւնները, զորս կարելի է հա-  
նել կօշիկի կապէ մը: Այդ կնոջ վրայ ձեր կարծիքը յայտ-  
նեցէք, իր արտաքինին համեմատ:

— Ի՛նչ ուրեմն, հերձաքարի գոյն յարդէ լայնեզր գլխարկ  
մը ունէր կարմիր փետուրով մը պճնազարդ, ուլունքներով  
ասեղնագործուած և նոյն տեսակ ծոպով մը զարդարուած սև  
ժաքէթ մը, կարմիր թաւիչէ օձիքով և թեւերով մութգոյն  
չրջագգեստ մը և ցուցամատը մաշած գորշագոյն ձեռնոցներ:  
Մոռցայ դիտել կօշիկները: Վերջապէս ականջէն կախած էր  
գինգաքարէ պզտիկ օղակներ: Այն սպաւորութիւնը տուաւ  
ինծի թէ խիստ դիւրակեցիկ մէկն է նուազ վայելուչ միջա-  
վայրին մէջ, սրուն կը պատկանի:

Շէրլօք Հօլմս ծափահարեց և չկրցաւ ժպիտը զսպել:

— Իրա՛ւ որ, Ուօթմարն, յառաջդիմութիւն կ'ընէք:  
Ձեր նկարագրութիւնը շատ ճիշդ է: Իրաւ է թէ ամէնէն

կարեւորը մոռցած էք, բայց մէթոսը հասկցած էք և դոյները  
ճիշդ կը տեսնէք: Երբեք ընդհանուր սպաւորութիւններու  
մի՛ վստահիք, աղա՛ս, այլ ձեր ամբողջ ուշադրութիւնը  
նուիրեցէք մանրամասնութիւններու: Կնոջ մը քով ես միշտ  
զգեստին թեւերուն կը նայիմ ամէնէն առաջ: Իսկ էրիկ մար-  
դու մը քով նախապէս կը նայիմ տափատին ծուռեղբուն:  
Ինչպէս դիտած էք, այս կինը թեւին վրայ թաւիչ ունէր:  
Գիտէք թէ թաւիչը այն կերպասն է, որ ամէնէն աւելի դիւ-  
րութեամբ կ'աւրուի: Արդ, դատտակին վերեւ, թաւիչին  
վրայ կը գտնուէր այն կրկին դիծը, որ կը կազմուի, երբ մե-  
քենայով գրող մը ձեռքը սեղանին կը կրթնցնէ: Նո՛յն նշանը  
գոյութիւն ունի ձեռքի մեքենայով կար կարող անձերուն  
թեւին վրայ: Բայց այն ատեն ձախ թեւին վրայ միայն կը  
գտնուի այդ նշանը, ու այն ալ փթածատին հակառակ կող-  
մը, փոխանակ դատտակին ամբողջ լայնութեանը վրայ, ինչ-  
պէս էր Օր. Սըթըրլէնտի համար: Ասկէ զատ ուշադրութեամբ  
նայելով դէմքին, ակնոցի մը դրոշմը դիտեցի քիթին վրայ:  
Այս գննութիւնը միւսին հետ միանալով թողատրեց ինծի  
օրիորդին կարճատեսութեան և մեքենայով գրելուն վրայ  
խօսիլ, մեծ զարմանք պատճառելով իրեն:

— Կը խոստովանիմ թէ ես ալ անոր չափ զարմացած էի:

— Շատ պտրդ էր սակայն: Ուրիշ դիտողութիւն մը չա-  
հազրգուութեան արժանի երեւցաւ ինծի: Սա՛ է թէ կօշիկ-  
ները իրարմէ տարբեր էին, առանց բացարձակապէս իրարու  
անման ըլլալու: Մէկը սրածայր էր, իսկ միւսին ծայրը հարթ  
էր: Ընդունելի՞ է որ հողածու աղջիկ մը իրարու հնամանոյ  
կօշիկներով դուրս ելլէ, եթէ սակայն աճապարանքով մեկ-  
նած չէ: Կօշիկներէն մէկուն հինգ կոճակներէն երկուքը միայն  
դրուած էին և միւսին ալ երրորդ և հինգերորդ կոճակները:

— Ե՛տքը, հարցուցի հետզհետէ հետաքրքրութեամբ Շէր-  
լօք Հօլմս բարեկամին այսքան սեղմ ու պայծառ տրամաբա-  
նութենէն:

— Հաստատեցի թէ բոլորովին պատրաստ և դուրս ել-  
լելու վրայ, նամակ մը գրած էր: Անշուշտ դիտեցիք թէ իր  
աջ ձեռնոցը ցուցամատին կողմէ պատուած էր և թէ ձեռնոցն  
ու մատը մանիշակագոյն մեղանի բիծեր կը կրէին: Իր աճա-  
պարանքին մէջ գրիչը կազամարին շատ խորը թաթխած ըլ-

լալու է: Ասկէ զստ նշանը շատ թարմ էր, ինչ որ կ'ապացուցանէ թէ Օրիորդը գալէն առաջ գրած էր: Չեղի ըսածներս, թէ եւ զբոսեցուցիչ, բայց շատ տարբական են և մարդուն աչքին կը զարնեն: Հիմա պէտք է ստիպան, Ուօթսըն, որ գործերուս պարագիծ: Կը հաճի՞ք կարդալ թերթին ծանուցումը, որուն մէջ Մր. Հոսմըրը կ'ընդրի նկարագրութիւնը եղած է:

Պատահանին մօտեցայ և նետեւայր կարդացի:

«Ամսոյս 16ի առտուն կորսուած է Հոսմըրը կ'ընդրի անուն մարդ մը, իբր նինգ սոք և եօթը բթաչափ բարձր, շատ ուժեղ կազմուածքով, սոճոյն մորթով, սեւ մազերով, գլուխին կատարը քիչ մը ճաղատ, սեւ պիսեր և խիտ կիսամօրուքներ, գունասևոր ակնոց, լեզուի թեթեւ պակտութիւն: Վերջին անգամ հազած էր մեռաքտէ առտառով սեւ սրտէն կօթ, սեւ բաճկոնակ սակիէ չղթայով, մոխրագոյն կերպոսէ տափատ: Ոտքի կօշիկը ծածկուած էր թխազոյն նետկերով (թօղուէ): Պաշտօնեայ էր Լիտէնոյ Սթրիթի մէկ գրասենեակին մէջ: Ո՛վ որ եւն...»:

— Ասիկա կը բաւէ ինձի, բայտ Հօյմս: Գալով նամակներուն, աւելցոց աչքէ անցրնելով զանոնք, շատ հասարակ բաներ են: Ինչու չկայ բան մը որ Մր. կ'ընդրի ներքը ցոյց տայ մեզի, բացի Պաշաքի մէջը բերումէն: Բայց մանրամասնութիւն մը կայ, որձեր ուշադրութիւնը գրաւած ըլլալու է, ինչպէս իմս:

— Սա է թէ անոնք սպուած են, պատասխանեցի:

— Այո՛, մինչեւ ստորագրութիւնը: Կը տեսնէ՞ք, — Հօսմըրը կ'ընդրի, նամակներուն ստորտը սպուած: Կը գիտեմ նաև թէ անոնք թուական ունին, բայց Լիտէնոյ Սթրիթի խիտ տարտամ հասցէն միայն կը կրեն: Այո ապեալ ստորագրութիւնը ինձի համար շատ թելադրական է, պիտի բտեր նոյն իսկ վճռական:

— Ինչո՞ւ:

— Կարելի՞ բան է որ, սիրելի՛ բարեկամս չըմբօնէք ունոր կարեւորութիւնը:

— Ո՛չ, եթէ սակայն ինչքոյ տարկայ անձը զիտաւորութիւն ունեցած չըլլայ մերձել այդ նամակները երբ իրեն զէմ՞ գտաւ բացուի խոստմնազանսութեան համար:

— Չհասկցաք: Հիմակուհիմա երկու նամակ պիտի գրեմ՝

որոնք ստոյգ տեղեկութիւններ պիտի հայթայթեն մեզ: Մէկը պիտի գրկեմ քաղաքին մէկ ընկերութեան և միւսը՝ աղջկան խորթ հորը Մր. Ուինստիպէնքի, որուն ժամադիր կ'ըլլամ հոս, վաղը իրիկուն ժամը Յին: Կարծեմ թէ նախընտրելի է այս կատակերգութեան արու անձնաւորութիւնները միայն նկատի առնել: Եւ հիմա, սո՛քտոր, ընկելք բան մը չկայ մինչեւ որ պատասխաններս ստանա: Ուրեմն ուրիշ բանի վրայ խորհի՛ք:

Գործի վրայ տեսած ըլլալով գիտէի բարեկամիս արամուքանելու զօրաւոր կարողութիւնը և նպատակին հասնելու համար ցոյց տուած արտաքոյ կարգի կորովը: Ուստի վայրկեան մը իսկ շարակուսեցայ թէ լուրջ պատճառներ ունէր այսքան նանդարտութիւն և համարձակութիւն ցոյց տալու համար այն տարօրինակ գաղտնիքին մէջ, զոր կոչուած էր խորաչափել: Միայն անգամ մը, Իսէն ապիլի լուսանկարի գործին մէջ թերացած էր, բայց ի փոխարէն, երբ կը յիշէի Չորսերու նշանին գրամը և կարմրի ուսումնասիրութեան նետ կապ աւնեցող տարօրինակ պարագաները, վստահ էի այս վերջին խնդրին լուծման մասին և համոզուած էի թէ Հօյմս կարճ միջոցի մէջ պիտի գտնէր Օր. Սթրիթի նշանածին նետքը: Ուստի թողուցի որ սեւ հողէ իր ծխամորձը ծխէ հանդարտօրէն ու ես վազեցի հոն, ուր պարտականութիւնը կը կոչէր զիս: Այդ պահուն խիտ նիւանդ յաճախորդ մը ունէի, որուն դարմանումին զբաղեցայ յաջորդ օրը մինչեւ իրիկուն: Իրեկուան ժամը վեցին միջոցները միայն ազատ եղայ: Անմիջապէս օգուտ քաղեցի առկէ ու կառքի մը մէջ նստելով Պէյքըր Սթրիթ գացի, վախնալով մէկտեղ որ գիտահազրդօտը պատմութեան վախճանը պիտի չկրնամ հասկնալ: Եէրթօք Հօյմսը առանձին դասայ, իր թիկնախոսին մէջ քնացած: Իրեն քով կային չիչեր և փորձի յատուկ աճաններ: Քրտուտի թիւուի առողջ բայց կծու հատը ցոյց կուտար ինձի թէ բարեկամս իր ամէնէն սիրական փորձերը կատարած էր:

— Ի՛ ուրեմն, լուծում մը գտաք, հարցուցի իսկոյն:

— Այո՛, պիսիլիճար...:

— Ո՛չ, ո՛չ, աղ չէ, զաղտնիքին համար կ'ըսեմ, պառայցի:

— Օ՛չ, ներողութիւն, միայն այսօրուան աշխատու-

Թիւնովս գրաւուած էր սակաւին: Բայց երբեք գաղտնիք չկայ այդ գործին մէջ, որ սակայն քանի մը շահեկան մանրամասնութիւններով ճոխացած է: Յաւ մը ունիմ արտայայտելիք,— այսինքն օրէնք մը չկայ այդ թշուառականը պատժելու համար:

— Բայց ո՞վ է յանցաւորը և ինչո՞ւ լքած է Օր. Սըթըրբէնտը:

Տակաւին աւարտած չէի հարցումս և Հօլմս դեռ բերանը բացած չէր պատասխանելու համար երբ նորանցքին մէջ ծանր փոփոխութիւն մը լսեցինք: Յետոյ հարուած մը վարնուեցաւ զրան:

— Աղջկան խորթ հայրը՝ Մր. ձէյմս Ուինտիպէնքն է, ըսաւ Հօլմս: Ինծի գրած է թէ ժամը ճին պիտի գար: Մտէ՛ք, պոռաց:

Ներս մտնող մարդը իբր 30 տարու ուժեղ մէկն էր, ատգոյն մորթով, կեղծանոյշ, նոյն իսկ սողոսկուն ձեւերով և շարամուտեամբ լեցուն զօյգ մը աչքերով: Խուզարկու ակնարկ մը ձգեց մեր վրայ, բարձր իւզոտ գլխարկը սեղանին վրայ դրաւ ու թեթեւ ողջոյն մը տալէ ետք մեզի, ամէնէն մօտ աթոռին վրայ ինկաւ քան թէ նստաւ:

— Բարի իրիկուն, Մր. ձէյմս Ուինտիպէնք, ըսաւ Հօլմս: Կարծեմ թէ դուք էք որ այս տպեալ նամակով ժամադիր եղաք ինծի այս տեղ ժամը ճին:

— Այո՛, պարոն, թերեւս քիչ մը ուշ կուգամ, բայց միշտ ազատ չեմ շարժումներուս մէջ: Շատ կը ցաւիմ որ Օր. Սըթըրբէնտ այս պզտիկ գործով տաղակացուց ձեզ, վասնզի իմ կարծիքս սա է որ մարդ պէտք է իր աղտոտ լաթը իր ընտանիքին մէջ լուայ: Իմ կամքիս հակառակ է որ ձեզ տեսնելու եկաւ, բայց ա՛յնչափ շղային աղջիկ մըն է, ինչպէս կրցաք անձամբ դատել, որ դժուար է իր տուած մէկ որոշումէն ետ կեցնել զինք: Իրաւ է թէ պաշտօնական ոտտիկանութեան հետ գործ չունիք, ինչ որ այնչափ չի ծանրացներ աղջկան ձեռնարկը: Սակայն հաճելի բան մը չէ տեսնել ընտանեկան այսչափ ցաւալի զէպքի մը տարածախոտիլը: Վերջապէս պարտաւ տեղը դրամ պիտի ծախսուի: Ի՞նչպէս գտնելու է այդ Հօսմըր Էնճըրը:

— Ես կը յուսամ գտնել զայն, ըսաւ Հօլմս հանդար-

տօրէն: Այսպէս խօսելու համար լուրջ պատճառներ ունիմ: Մր. Ուինտիպէնք շղային սարսուռ մը ունեցաւ և ձեռնոցները վար ինկան:

— Կը չնորհաւորեմ ձեզ, ըսաւ:

— Զարմանալի է որ գրի մեքենան դէթէ նոյնչափ անհատականութիւն ունի որչափ սովորական դիրք: Բաց ի անոնցմէ, որ բոլորովին նոր են, չէք կրնար դտնել երկու հատ («ս»), որոնք բացարձակապէս իբարու նմանին: Այսպէս, գիրք կան, որոնք միւսներէն աւելի կը մաշին: Կան ալ որ միայն մէկ կողմէ կը մաշին: Նայեցէք ձեր նամակին, Մր. Ուինտիպէնք: Ձեր «է»երէն ո՛չ մէկը անթերի է և («ս»)ն բարակ մասը պզտիկ պակտութիւն մը ունի: Ուրիշ 14 յտանկանիչեր ալ գտայ, բայց յիշածներս ամէնէն բացայայտներն են:

— Ստոյգ է թէ այդ մեքենան քիչ մը հինցած է, վասնզի գրասենեակին մէջ անիկա մեր բոլոր նամակներուն համար կը գործածուի, պատասխանեց մեր այցելուն, պզտիկ վառվառուն աչքերը Հօլմսի վրայ սեւեւելով:

— Ամենքը այս չէ, Մր. Ուինտիպէնք, աւելցուց Հօլմս, և պիտի շարունակենք այս ճշմարտապէս շահեկան ուսումնասիրութիւնը, որ ինծի կը թելադրէ գիրք մը պատրաստել գրի մեքենային և ոճիւններու մէջ անոր խաղացած դերին վրայ: Նիւթը ուսումնասիրած եմ արդէն: Զորս նամակներ ունիմ, որոնց համար կ'ըսուի թէ անհետացած մարդուն կը պատկանին: Ամենքն ալ մեքենայով գրուած են և բայց ի տմանաւոր պարադպէն թէ «է»երը յէշ գրուած են և («ս»)երուն բարակ մասերը պակասաւոր են, կրնաք, կթէ կը հաճիք, խոչորացուցովս տեսնել այն միւս 14 յտանկանիչերը, որոնց ակնարկեցի:


Մր. Ուինտիպէնք յանկարծ ոտքի ելաւ և գլխարկը առաւ:

— Կորսնցնելիք ժամանակ չունիմ, Մր. Հօլմս, ըսաւ: Ձեմ կրնար աւելի երկար ատեն մտիկ ընել այս երեսակայական խօսքերը: Եթէ մարդը գտնէք, ձերբակալեցէք և ինծի իմացուցէք:

— Անչա՛ւշտ, պատասխանեց Հօլմս զէպ ի դուռը կրկնալով որպէսզի կրկէ: Կը ծանուցանեմ ձեզի թէ այդ մարդը գտնուած է:

— Ի՞նչպէս, ո՛ւր, պոռաց Մր. Ուինտիպէնք:

Երկօր Հօլմս 2



Գեր-դեղին կարած էր և չորս կողմը կը նայեր, ինչպէս պիտի ընէր թակարդի մէջ բռնուած մուկ մը:

— Օ՛հ, կը բուէ այսչափ կատակը, իրա՛ւ կը բուէ քսաւ Զօյմն կեղծ անուշութիւնով մը: Միջոց չունիք ազատելու, Մր. Ուինտի՛ պէնք: Չեր խորամանկութիւնը բացարձակապէս երեւան ելած է և դուք գէշ մեծարանք մը ըրիք ինձի, ըսելով թէ անկարելի էր այսքան պարզ խնդիր մը լուծել: Նստեցէք և լրջօրէն խօսինք:

Մեր մարդը թիկնաթոռի մը վրայ ինկաւ, նեպօքեան աւելի սովորուած և ճակատը պարզ քրտինքով մը ծածկուած:

— Դատարան... յանձնուելիք գործ մը չէ... թոթովեց:

— Կը վախնամ որ այնպէս է, Մր. Ուինտի՛ պէնք, բայց խօսքը մէջերնիս, այս եղածը գիտցածներուս մէջ ամէնէն անպարծ, ամէնէն հոտակեր ու վատ խաբէութիւնն է: Թողէք հիմա որ համառօտ կերպով պատմեմ իրողութիւնները և դուք կը կեցնէք դիս եթէ կը սխալիմ:

Մեր մարդը իր աթոռին մէջ թաղուած էր, գլուխը կուրծքին վրայ ծածկ: Բոլորովին սմբած կ'երեւար:

Զօյմն տարելոյ վառարանին դարաւանդակին կրթնցուց և ձեռքերը դրպանին մէջ, ինչպէս սովորութիւնն էր, սկսաւ պատմութեան մը, գոր կարծես աւելի ինքնիրեն քան թէ ներկաներուն կ'ուզէր:

— Խնդրոյ առարկայ անձը, քսաւ, միմիայն գրամին համար ամուսնացած է շատ աւելի տարիքոտ կնոջ մը հետ, որուն աղջիկը իր անձնական պզտիկ հարստութեամբ կը նպաստէր քնտանիքին բարեկեցութեան: Անոր եկամուտները այդ դիրքը ունեցող մարդոց համար մեծ գուժար մը կը ներկայացնէին: Եւ առանց այդ օժանդակութեան, անշուշտ պիտի նեղուէին: Ուստի ամէն պարապախի մէջ հօրկ էր որ իրերու այդ վիճակը շարունակուէր: Բացայայտ էր թէ այդ աղջիկը, իր բարի և հաճելի լինութիւնով և բուռն սիրոյ ու նոյն իսկ առփանքի ընդունակ ըլլալով, ու նաև ֆիզիքական յատկաւ թիւններով օժտուած, քիչ ատենէն պիտի ամուսնանար և այս ամուսնութիւնով, քնտանիքը տարեկան 2500 Ֆր.ի եկամուտը պիտի կորսնցնէր: Այն ատեն ինչ կ'երեւակայէ խորթ հայրը, այս ամուսնութեան արգելք ըլլալու համար: — Թող չի տար որ աղջիկը դուքս ելլէ և տարեկից ընկերներ

նստէ: Բայց կը վախնայ որ այս դրութիւնը չի յաջողիր, ամն զի իր խորթ աղջիկը կը գիմարէ, անկախութեան իրաւունքները կ'արժեցնէ և օրին մէկը կը յայտարարէ թէ որո՞ւմ է պարարանդէս երթալ: Այդ խորթ հայրը ինչ կը հնարէ այս անգամ. — խորամանկութիւն մը, որ աւելի իր մտքին ան թէ սրտին պատիւ կը բերէ: Օգնութեամբ իր կնոջը, ան թէ մեղաւոր կ'ըլլայ, կը ծպտուի, աչքերը կապոյտ ակոյցներու տակ կը ծածկէ, կեղծ պէիս մը և խիտ կիսամոռքներ կը դնէ, ձայնը սողոսկուն մրմունջի մը կը փոխէ աղջկան կարճատեւութենէն օգտուելով կը ներկայանայ բրնձ Մր. Հօմարը կնոջը: Այս կերպով կը հեռացնէ թեկնաւանները և իր հաշուոյն կը սիրաբանէ անոր հետ:

— Աղիզաները կատակ մըն էր առիկա, մրմունջ մեր այս ելուն: Չէինք կրնար ենթադրել թէ այս աստիճան պիտի արէր գործին:

— Անշուշտ, բայց ո՛չ նուազ ճշմարիտ է թէ աղջիկը աստ սիրահարուած էր և թէ անիկա երբեք չկասկածեցաւ մասնութենէ մը, համոզուած ըլլալով թէ խորթ հայրը նրանտա կը գտնուէր: Յայտնապէս փաղաքշուած էր այն իտեթաջանութիւններէն, որոնց առարկան էր և իր մօրը ակներես հիացումը աւելի կը շատցնէր անոնց տպաւորութիւնը: Այն ատեն Մր. կնոջը աղջկան տունը գալու վտանգը աչք առաւ, վասն զի իր նպատակին հասնելու համար կ'ուզէր գործը կարելի եղածին չափ նեղուն ամուսնի: Յաճախ տեսակցեցան իրարու հետ և ի վերջոյ նշանուեցան: Ասիկա իրեն համար միջոց մըն էր թոյլ չտալու համար որ աղջիկը ուրիշ թեկնածու մը փնտռէր: Սակայն այս վարպետութիւնը չէր կրնար միշտ աւելի և խորթ հօրը զէպ ի Ֆրանսա ըրած կարծեցեալ ճամբորդութիւններուն բացատրութիւնը զիւրին չէր: Ուստի հարկ էր ամէն պարապախի մէջ վերջացնել գործը երկերեքական կերպով մը, որպէս զի նշանածը տպաւորուէր անոր աստիճան որ երկար ատեն մտքէն չանցընէր ամուսնանալ: Այս կերպով կը բացատրուին Ս. Գրքին վրայ աղջկան բացատրել տուած հաւատարմութեան ուխտը և ակնարկութիւնները զէպի մը, որ կրնար պատահիլ ամուսնութեան առաւուն իսկ: Ճէյմս Ուինտիպէնքի նպատակը սա էր որ Օր. Սըրբրէնտ ա՛յնպիսի կերպով մը կապուէր Հօմարը

Էնճըլի հետ և ա՛յնչափ անդիտակ ըլլար անոր վիճակին որ տարը տարի չուզէր ամուսնութեան ո՛ր և է առաջարկ լսել: Ուտի մինչև եկեղեցի տարաւ զայն և որովհետեւ խեղկատակութիւնը պէտք է կանգ առնէր հոն, զիւրութեամբ անհետացաւ գործածելով հին խաղը, որ կը կայանայ կառքին մէկ դուռնէն մանկուն և միւսէն դուրս ելլելուն մէջ: Ի՛նչպէրը այս կերպով անդի չունեցա՞ն, Մր. Աւինտիպէնք:

Մեր մարդը այս պատմութիւնը լսելով, քիչ մը ապահովցած էր ու երբ սուքի ելաւ պատասխանելու համար, պաղ հեղնութիւն մը կը կարդացուէր դէմքին վրայ:

— Իրաւ է կամ իրաւ չէ, Մր. Հօ՛ւմն, բաւ, բայց կարեւորութիւն չունի և քանի որ այսքան խորամանկ էք, գիտէք թէ այս պահուս դուք օրէնքին դէմ կը գործէք ո՛չ թէ ես: Այդ օրէնքին որամտադրութեան տակ խնկող բան մը ըրած չեմ ես, մինչ դուք բռնութեան և ապօրէն հարկազրութեան յանցանքը կը գործէք այս դուռը կղզած պահելով:

— Օրէնքը, ինչպէս շատ լա՛ւ կ'ըսէք, չի կրնար պատժել ձեզ, բաւ Հօւմն դուռը բանալով և սակայն ձեզմէ աւելի պատժոյ արժանի մէկը չկայ: Եթէ աղջիկը, որուն հետ անարժանօրէն վարուած էք, եղբայր մը կամ բարեկամ մը ունենար, ձեզ մտրակելու իրաւունք պիտի ունենար: Իրա՛ւ որ, շարունակեց Հօւմն իր խօսակիցին հեղնական ժպտանէն ոգեեորուելով, իմ իրաւասութեանս մէջ չէ, բայց ա՛նա կ'ըսեմ ձեզի թէ որսի մտրակ մը ունի՞մ ձեռքիս տակ և կարծեմ թէ...

Յտուաջացած էր մտրակը աննկու համար, բայց ժամանակ չունեցաւ:

Մր. Աւինտիպէնք փախած էր և սանդուղէն արագ արագ իջնելով, բակին ծանր դուռը դոցած էր վրայէն: Պատուհանէն տեսնա՞ք որ որունքներուն բոլոր սլոմովը կը փախչէր:

— Ահաւասիկ թշուառական մը, որ յանդգնութիւն ունի, ըսաւ Հօւմն գուարթօրէն, իր աթոռին վրայ ինչալով դարձեալ: Այս մարդը ոճիրի ճամբուն մէջ իր սկզբնաւորութիւնը կ'ընէ և մինչև թիարան պիտի երթայ: Ամէն պարագայի մէջ այս գործը շահեկանութենէ զուրկ չեղաւ բոլորովին:

— Կը խոստովանիմ թէ ձեր պատճառաբանութիւնը լաւ չեմ գիտեր:

— Է՛ ուրեմն, բացատրեմ: Ակիզդէն իսկ համագումար էի թէ այդ Մր. Հումբը Էնճըլը գորաւոր պատճառներ ունէր այդքան այլանդակ կերպով գործելու համար: Որոշապէս գիտէի թէ խորթ հայրը միակ անձն էր, որ օգուտ պիտի քաղէր դէպքէն: Ուրիշ մանրամասնութիւն մը, որ թեպէտք կան երեցաւ ինծի, սա էր թէ խորթ հայրը և նշանածը երբեք միատեղ երեցած չէին: Մէկը կը յաջորդէր միւսին: Կապոյտ ակնոցները ու այդ տարօրինակ ձայնն և երկար կիսամօրութիւնը կառկածելի երեցան ինծի: Ինքներեւ ըսի թէ գործին մէջ ծագում մը կայ: Եւ բոլոր կասկածներս համոզումի խիստեցան երբ հատուակեցի թէ Մր. Էնճըլի ստաբալութիւնը տպաբուսած էր աղջկան ընտանի գիր մը քոզարկելու ակնարկ նպատակով: Կը տեսնէք թէ այս բոլոր առանձնափի եղելութիւնները՝ աւելնալով ուրիշ ո՛չ նուազ կարիւր դէպքերու վրայ, գորս կրցայ երեւան բնեղ, միևնպէս նպատակին կը ձգտէին:

— Բայց ի՛նչպէս ճշգրտեք զանոնք:

— Քանի որ դատած էի յանցաւորք, զիւրին էր եղելութիւնները կապակցել Գիտէի թէ ո՛րն էր այն ընկերութիւնը, որ այս մարդը կը գործածէր: Կրագրին մէջ տպուած նկարապատութիւնը անօրէնին զրկեցի, ջնջելով անկէ ինչ որ կրօնար ծագում ըլլալ, ինչպէս կիսամօրութիւնը, ակնոցը և ձայնը և հարցնելով անոր թէ իր պաշտօնականի մէկը կը համամասպահանէր այս նկարապատութեան: Եւ որովհետեւ զբի մեքենային թերութիւնները նշմարած էի արդէն, երկտող մըն ալ Մր. Աւինտիպէնքի զրկեցի, խնդրելով որ բարեհաճի տունս դալ: Ինչպէս կ'օգտակէի, իր պատասխանըրը տպազիր էր և ցոյց կուտար թերութիւնները, որոնք, թէև աննշան, բայց ո՛չ նուազ յատկանշական էին: Նոյն թղթատարով ըստացայ Ֆինչըրը Սթրիթի Ուէսթհաուզ Էնա Մէրպլէնք հաստատութենէն նամակ մը, որ կ'ըսէր թէ ձէյմն Աւինտիպէնք ամէն կերպով կը համապատասխանէր զրկած նկարապատութեան: Ահաւասիկ այս է ամենքը:

— Եւ Օր. Արթըրը կ'ար:

— Եթէ ճշմարտութիւնը բո՞ւմ իրեն, պիտի չհաւատայ: Անշուշտ կը յիշէք պարսկական հին առածը՝ «Նոյնչափ փտանգաւոր է կորդել էզ վազրի մը ձազը, որչափ կ'ո՞մ մը պատրանքը»: Հա՞ճոյք Ուրաախոսի չափ աղէկ կը ճանչնայ մարդկութիւնը:

# ՊՕՄՔՕՄՊԻ ՀՈՎԻՏԻՆ ԳԱՂՏՆԵՔԸ

Աւտու մը, կինս ու ես կը նախաձայէինք երբ Շէրլօք Հօլմսէն հեռագիր մը յանձնեցին մեզ հետեւել խմտով :

«Երկու օր ազատ կրնա՞ք ըլլալ : Հեռագրով արեւմուտք կանչուած եմ Պօսթօմպի հովիտին գործին համար : Ուրախ պիտի ըլլամ միտոն տանելով ձեզ : Հեշտայի կրիմայ : Հաճելի երկիր : Մեկնում ժամը 11, 15, Բէտինկիթընի կայարան» :

— Ի՞նչ կը խորհիք, բարեկամս, կ'ընդունի՞ք, հարցուց կինս :

— Չեմ գիտեր : Այս միջոցին շատ հիւանդ ունիմ :

— Օ՛հ, Անսթրթթըր ի հարկին ձեր գործը կը տեսնէ : Դէժքերնիդ աղէկ չէ և կարծեմ թէ օգի փոփոխութիւն մը օգտակար պիտի ըլլար, առանց խօսելու այն շահեկանութեան վրայ, զոր ամէն ատեն ձեզի համար ունին Շէրլօք Հօլմսի դատական քննութիւնները :

— Ապերախտ եղած պիտի ըլլայի եթէ այդ քննութիւններուն հանդէպ սէր չունենայի, քանի որ անոնցմէ մէկուն կը պարտիմ ձեր ամուսինը ըլլալս : Բայց եթէ պիտի մեկնիմ, կորսնցնելիք ժամանակ չկայ : Ճիշտ կէս ժամ ունիմ պայուսակն կուպելու և կայարան երթալու համար :

Աֆգանիստանի արչաւանքս արագ մեկնումներու վարժեցուցած էր զիս : Երբեք աւելորդ բեռներով չէի խճողուեր : Ուստի ամէնէն անհրաժեշտները առնելով, քանի մը վայրկեան ետք կառքով կ'երթայի Բէտինկիթընի կայարանը : Շէրլօք Հօլմս արդէն կը պտտէր քարտիին վրայ : Կերպատէ գրխարկ մը կը կրէր, զոր մինչև ականջները իջեցուցած էր և իր վախ աւրուանկարք աւելի երկար ու աւելի նուրբ կ'երեւէր իր երկար մոխրագոյն վերարկուն տակ :

— Շատ ազնիւ էք որ եկաք, Ուօթօրն, բաւ : Մեծապէս պիտի օգնէք ինձի, վասնզի կրնամ կատարելապէս վրտանով ձեզի : Ընդհանուր կանոն է որ տեղւոյն վրայ կանխակալ կար ծիգնի ունեցող կամ անօգուտ մարդեր միայն կը

գանուին : Ուրեմն վախն նստեցէք և երկու անկիւնները ըրունեցէք : Ես տոմսակ առնելու երթամ :

Վախոնին մէջ առանձին էինք, բայց ամբողջովին կը լեցնէինք զայն թուղթերով, որոնք խճողած էին Հօլմսը : Պրպտեց այս ստուար թղթածրարը, երբեմն ընդմիջելով, կա՛մ ծանօթագրելու և կամ մտածելու համար : Յաիկա տեւեց մինչև Բիտինկէն անդին : Այն ատեն իր բոլոր թուղթերը խօշոր գունդի մը պէս պլորեց և ցանցին մէջ նետեց : Յետոյ ինձի գառնալով հարցուց .

— Այս գործին վրայ բան մը լսեցի՞ք :

— Ո՛չ, բան մը չեմ գիտեր : Քանի մը օրէ ի վեր լրագիր չեմ կարդացած :

— Կոտորնի մամուլը անկատար տեղեկութիւններ միայն տաացած է : Նոր հրատարակուած թերթերը աչքէ անցուցի, որպէսզի դազափար կազմելու գործս աւարտեմ : Յակայն ինձի կուգայ թէ այս գործը մէկն է անոնցմէ, որոնք ըստ Քրեոյթին շատ պարզ են, բայց նոյնքան դժուար է բացատրութիւնը :

— Ատիկա քիչ մը դարմանայի կ'երեւայ ինձի, սերելի բարեկամ :

— Սակայն շատ ճիշդ է : Իսկատպութիւնը գրեթէ միշտ սրոջ նշան մը կը հայթայթէ ինձի : Ոճիր մը ո՛րքան հասարակ ըլլայ, այնքան դժուար է ապացուցանել զայն : Մեզ գրադեցնող գործին մէջ շատ զօրաւոր ենթադրութիւններ կան սակայն զոնին որդւոյն դէմ :

— Ուրեմն ինչոյրը սպանութեան մը վրայ է :

— Այնպէս կ'ենթադրուի : Բայց չեմ ուզեր կարծիք յայտնել քննութիւնս կատարելէ առաջ : Ահաւասիկ, քանի մը բաւով, իրողութիւնները, ինչպէս որ կը հասկնամ զանոնք .— Պօսթօմպ քաղաքը Միրֆօրտչայրի մէջ, Բօսի ժօմ դաւառակ մըն է : Այս գաւառակին ամէնէն կարևոր սեփականատէրը Մր. Թըրնըր անունով մէկն է, որ իր հարստութիւնը Աւտարալիոյ մէջ չիւնած և քանի մը տարիէ ի վեր միայն դարձած է իր ծննդավայրը : Իր ազարակներէն մէկը, — Հէթըրլէի ազարակը — վարձու տուած է Մր. Չարլզ Մաք Քարթիթի, որ նոյնպէս Աւտարալիացի մըն է : Այս երկու մարդիկը, քաղթավայրերուն մէջ զիրար ճանչցած ըլլալով, շատ ընտ-

կան էր որ աշխատէին իրարու մօտենալ, Թըրնըր ամէնէն հարուստն էր: Մաք Քարթի անոր ազարակազանը եղաւ, ինչ որ իրենց արդելք մը չէր իրարու հետ կատարելապէս հաւասար վիճակի մէջ ապրելու և յաճախ միասին պատելու: Երկուքն ալ այրի էին: Մաք Քարթի 18 տարեկան մանչ մը միայն ունէր, իսկ Թըրնըր՝ նոյն տարիքը ունեցող միամօր ազջիկ մը: Երկուքն ալ դրացիներու ընկերութիւնը փնտռած չէին: Քաջուած կ'ապրէին, ձիարշաւերու հաւաքովներուն միայն յաճախելով, քանի որ ձիարշաւի ջերմ «ամաթէօ»ներ էին: Մաք Քարթի երկու ծառայ ունէր, էրիկ մարդ մը և կին մը, մինչ Թըրնըրի ծառայները վեցէն պակաս չէին: Ընտանիքին մասին ամբողջ դիտցածու աս է: Անոնք իրողութիւններուն:

Յունիս Յին, այսինքն անցեալ երկուշաբթի, Մաք Քարթի, կէս օրէ ետք ժամը Յին միջոցները մեկնեցաւ: Հէթըրէի իր սունէն և քաղելով իջաւ Պօսթօմպի ջրակոյտը. — պզտիկ լիճ մը, որ համանուն հովիտը սուղոց գետին չորղումէն կազմուած է: Առտուն Բօս գացած էր իր ծառային հետ, որուն բոկը է թէ կ'աճապարէր որովհետեւ ժամը Յի համար կարեւոր ժամադրութիւն մը ունէր: Հոն դացած է, բայց ոչ դարձած չէ:

Հէթըրէյէն մինչև Պօսթօմպի լճակը հինգ հարիւր մէթր հեռաւորութիւն կայ և ճամբան երկու հողի հանդիպած են Մաք Քարթիի: Այս վկանելէն մէկը ձերտուի կին մըն է, որուն անունը չեն տար: Միւսն է Ուլիերմ Քրօտըր, Մր. Թըրնըրի պաճակներէն մէկը: Երկուքն ալ կը հաւատան թէ Մր. Մաք Քարթի տօանմին էր: Պաճակը կ'աւելցնէ թէ Մր. Մաք Քարթի անցնիլը տեսնելէն քանի մը վայրկեան ետք հանդիպած է անոր որդւոյն՝ Մր. ձէլմն Մաք Քարթիի որ մեկնոյն ճամբուն կը հետեւէր, հրացան մը ունենալով թեւէն տակ: Իրեն անանկ կուգայ որ այդ վայրկեանին հայրը սակաւին կը տեսնուէր և թէ որդին մօակն կը հետեւէր անոր: Եւ յետոյ կարեւորութիւն չընծայեց այս իրողութեան և միայն յիշեց իրեկունը, երբ պատահած տուամը իմացաւ:

Երկու Մաք Քարթիները վայրկեան մը ետք ալ տեսնուած են: Պօսթօմպի ջրակոյտը եզերուած է խոտերով և եղէգնե-

րով, որոնք մինչև ջուրին մէջ կը բռնանին և չըջապատուած է խիտ թաւուտներով: 14 տարու ազջիկ մը, Բէշընն Սօրէն, Պօսթօմպի հովիտին կաշուածին գունապանին ազջիկը, կը հաւատաէ թէ անտառին մէջ ծաղիկներ հաւաքած պահուն, ջրակոյտին եզերքը տեսաւ Մր. Մաք Քարթին և զաւակը, որոնք կարծեա թէ բուռն կերպով կը վիճարանէին իրարու հետ: Լսեց որ Մաք Քարթի հայր կը նախատէր իր որդին և տեսաւ որ այս վերջինը ձեռք վերցուց, հօրը զարնելու գիտաւորութեամբ: Այնչափ վախցաւ որ փախաւ և տուն դառնալով մօրը ըտաւ թէ երկու Մաք Քարթիները իրարու հետ կը վիճէին Պօսթօմպի ջրակոյտին մօտ և թէ կը վախնար որ զիրար ծեծէին: Հազիւ թէ պատմութիւնը աւարտած էր, Մր. Մաք Քարթի սրդէ վազելով եկաւ գունապանին մօտ և ըտաւ թէ անտառին մէջ իր հայրը գտած էր մեռած և թէ հարկ էր օգնել: Ետա յուզուած երեւոյթ մը ունէր: Ո՛չ գլխարկ կար դրուիլը և ոչ հրացան՝ ձեռքը: Աջ ձեռքը և թեւը արեան թարմ բիծեր կը կրէին: Իր ցուցմունքին վրայ, հօրը գիտիլը գտան ջրակոյտին վրայ փոռուած: Գլուխը ծանր և զարնող զէնքով մը առաջ եկած հարուածներու հետքը կը կրէր: Վերքերը կրնային գոյացած ըլլալ հրացանի կոթովր, որ գտնուեցաւ խոտին վրայ, գո՛նէն քիչ հեռու: Այսպիսի ենթադրութիւններով, երիտասարդը անմիջապէս ձերբակալուեցաւ և քննութիւնը կամաւոր մարդապաշտութեան մը յանգած ըլլալով, չարեքալթի օր հանուեցաւ Բօսի դատարանին առջեւ, որ առաջիկայ նիստին յետաձգեց: Ահաւասիկ գլխուոր իրողութիւնները, ինչպէս որ կը հետեւին դատական պաշտօնեային քննութեան և ստիկանութեան տեղեկագիրէն:

Դժուար է աւելի ջախջախիչ ապացոյններ գտնել, բոյ: Եթէ երբեք պարագաներու վկայութիւնը ոճրագործ մը մտանանչած է, ճիշտ այս դարձին մէջ է:

— Այո՛, բայց այս վկայութիւնը կրնայ նաև շատ գէշ խաղեր խաղալ, պատասխանեց Հօլմն մտածկոտ գէճքով մը: Երբեմն կը թուի թէ մէկ կէտի կը դիմէ: Եթէ սակայն ձեր անձնական դատումը մէկզի բնէք և պարագաները բոլորովին տարբեր տեսակէտէ մը դիտէք, կրնայ պատահիլ որ ձեր եզրակացութիւնը բոլորովին տարբեր ըլլայ: Կը խոստովա-

սիմ սակայն թէ երիտասարդին դէմ փաստերը շատ լուրջ են :  
 Կարելի է ուրեմն որ յանցաւոր ըլլայ, թէեւ Օր. Քըքնը՝  
 դրացի ունեւորներին ազջիկը՝ և շրջականերէն քանի մը  
 հողի սնոր անմեղութեանը կը հաւատան և պաշտպանու-  
 թիւնը յանձնած են այն միեւնոյն Լէսդրատին, որ, ինչպէս  
 կը յիշէք, խառնուեցաւ « Կարմիրի ուսումնասիրութիւն »  
 կոչուած գործին : Լէսդրատ, խիստ վարանոտ ուղարով, խնձի  
 դիմեց և ա՛նա առոր համար է որ ձեզի և խնձի պէս միջին  
 տարիքով երկու հողի դէպ Սրեւմուտք կ'ուղղուին ժամը  
 յիսուն միոն արագութեամբ, փոխանակ իրենց տանը մէջ  
 հանդարտօրէն ճաշելու :

— Կը վախնամ թէ, ըսի, այսքան բացայայտ ապացոյց-  
 ներով մեծ օգուտ մը չքաղէք այս գործէն :

— Նորէն կ'ըսեմ թէ առաջին տեսութեամբ շատ պարզ  
 իրողութեան մը աւելի խարեւաւոր բան չկայ, պատասխա-  
 նեց ինդպիսով : Պիտի աւելցնեմ թէ մենք թերեւս աւելի  
 բարեբախտ պիտի ըլլանք զանելով ուրիշ մանրամասնու-  
 թիւններ, որոնք կրնան վերաբար ըլլալ Մր. Լէսդրատի ու-  
 չազբութեան : Ձիս կը ճանչնար և գիտէք թէ չեմ պարծե-  
 նար ըսելով որ իր կարծիքը զօրացնելու կամ անոր դէմ պայ-  
 քարելու համար պիտի գործածեմ ա՛յնպիսի միջոցներ, զորս  
 անիրա անկարող է գործածելու կամ նոյն իսկ համոզելու :  
 Ըստ գիպուածի պարզ օրինակ մը. — Կատարելապէս կը նշմա-  
 րեմ թէ ձեր սենեակին մէկ պատուհանը աջ կողմն է և կը  
 կասկածիմ թէ Մր. Լէսդրատ առոր չափ ակներեւ բան մը  
 դիտած ըլլայ :

— Վա՛յ անպիտան, ինչպէս :

— Սիրելի բարեկամս, գիտեմ այն խիստ բարեկիրթի և  
 համակ զինտարական սովորութիւնները որ կը յատկանշեն  
 ձեզ : Ամէն առտու կ'ածիլուիք : Բայց որովհետեւ ձախ կող-  
 մերնից աղէկ ամիլած չէք և ձեր ծնօտին տակ աւելի գէշ  
 ամիլած էք, բացարձակապէս ստույգ է որ այդ կողմը միւսէն  
 քիչ լուսաւորուած է : Ձեմ երեւակայիք թէ ձեզի պէս մարդ  
 մը այս արդիւնքով զոհանայ եթէ սենեակը պէտք եղածին  
 շափ լուսաւորուած ըլլայ տեսնելու համար : Ասիկա կը յի-  
 շեմ իբրեւ դիտելու և հետեւութիւն հանելու սովորական  
 օրրնաց մը : Նորնատ է ապրիլս և զարնը է որ ինչի՛ ծնօտայ :

մեր քնելիք հետազօտութիւններուն մէջ : Քննութիւնը երեւան  
 հանած է երկու երկրորդական կէտեր, որոնք սակայն իրենց  
 կարեւորութիւնը ունին :

— Արո՞նք են :

— Կ'երեւայ թէ գո՛հին որդին անմիջապէս ձերբակալուած  
 չէ, այլ Հէթըրլէի ազարակը վերադառնալէն ետք միայն :  
 Երբ ոստիկանապետը իրեն կարգաց ձերբակալման հրամա-  
 նագիրը, պարզապէս պատասխանեց թէ չէր զարմանար և  
 թէ արժանի էր անոր : Այս խօսքը բնականաբար փարատեց  
 կասկածները, զորս երդուեալ դատաւորները կրնային ունե-  
 նայ տակաւին :

— Խոտտովանութիւն մըն էր ասիկա, պուսացի :

— Ո՛չ, վամպիր յետոյ իր անմեղութեանը վրայ պնդեց :

— Այս խօսքը, միւս ծանր ապացոյցներուն վրայ աւել-

նալով, առնուազն կասկածելի է :

— Ընդհակառակը, բոաւ Հօլմս, լոյս մըն է, և թերեւս  
 միակը՝ ամպամած երկինքի մը վրայ : Ո՛րքան ալ անմեղ ըլ-  
 լայ, այնչափ ապուշ չէ որ հնչմարէ թէ ամէն բան իրեն  
 դէմ է : Եթէ իր ձերբակալութեան վրայ զարմացած երեւար  
 կամ եթէ զայրոյթ կեղծէր, ասիկա կասկած պիտի ներշնչէր  
 ինձի, վամպիր զարմանքը կամ բարկութիւնը, որ բնական  
 պիտի չըլլային այս պարագաներուն մէջ, թերեւս լաւ քա-  
 զարականութիւն մը պիտի երեւային յանցաւորին : Համար-  
 ձակ ու անկեղծ եղանակը, սրով մեր մարդը ընդունեց կա-  
 ցութիւնը, ինձի համար նշան մըն է կամ անոր բացարձակ  
 անմեղութեանը և կամ նկարագրի մեծ սյժի մը : Շատ պարզ  
 է նաև ըսել թէ եղածին արժանի էր, քանի որ հօրը դիակին  
 քով գտնուած է : Բացայայտ է թէ նոյն օրն իսկ իր սրբխա-  
 կան պարտաւորութիւնները մոռցած էր իր հայրը նախատե-  
 լու և մինչև իսկ զարնելու համար ձեռք վերցնելու աստի-  
 ճան, եթէ հաւտանք ազջնակին խիստ կարեւոր վկայութեա-  
 նը : Մեղագրանքը, զոր իր անձին ընել կ'երեւայ և ցաւը  
 անմեղ քան թէ մեղապարտ գիտակցութեան մը ապացոյց  
 են ինձի համար :

Գլուխս երերցուցի :

— Շատ մարդիկ նուազ լուրջ ապացոյցներու վրայ կա-  
 խազան հանուած են, պատասխանեցի :

- Անշուշտ : Եւ շատեր այ անիրաւ տեղը կախուած են :
- Երիտասարդը ի՞նչ կերպով կը պատմէ դէպքը :
- Կը վախնամ թէ այդ պատմութիւնը իր պաշտպաններուն համար քաջակերական չըլլայ բնաւ , թէեւ ես անոր մէջ մէկ կամ երկու թելադրական մանրամասնութիւններ կը գտնեմ : Զանոնք պիտի կարգաւ այս տեղ եթէ հաճիր նեղութիւն ստանանել :

Իր թուղթերու գեղին մէջէն հանեց տեղական թերթին մէկ օրինակը և մտոր դրաւ խնդճ ամբաստանեալին այսուրաբութիւնը պարունակող հատուածին վրայ : Հանգստաւէտ կերպով գետնի վրայ վակնին մէկ անկիւնը և հետեւեալ պատմութիւնը կարդացի .

« Այն ատեն Մր. ձէյմն Մար Քարթի գոնին միակ որդին հարցաքննուելով հետեւեալ յայտարարութիւնը որաւ .  
 « Պրիսթօլ գացած և երեք օր բացակայ գտնուած էի : Ամբողջ Յի երկուշաբթի առտուն միայն դարձայ : Հայրս սուր չէր գտնուեր երբ հին հասցէ և սպասուհին ըսաւ ինձի թէ կառքով Բօս գացած էր սպասուորին հետ : Քիչ կարք լսեցի անոր կառքին ձայնը և պատուհանին մօտենալով , տեսայ կառքէն վար իջնելը և արագօրէն հեռանալը : Չկրցայ հասկնալ թէ բաղէն դուրս ելլելէ վերջ ի՞նչ ուղղութեամբ գացած էր : Հրացանովս զննուեցայ և Պօսքօմպի ջրակոյտին կողմը պտտելու գացի , տեսնելու համար ճաշարանոցը , որ միւս կողմը կը գտնուի : Ըամբան հանդիպեցայ Ուիլիքմ Քրօարքի , որ արդէն իր վկայութեան մէջ յայտարարեց : Բայց կը հաւատտեմ թէ կը սխալի ենթադրելով որ հօրս հետեւէն գացի : Մտրէն չէի անցըներ թէ անիկա ինձմէ առաջ , քիչ մը աւելի հեռուն կը գտնուէր : Զրակոյտէն հարիւր մէտրի չափ հեռու , լսեցի « քուհի » աղաղակը , որ սովորական նշան մըն էր հօրս և իմ միջեւ : Քայլերս փութացուցի և ջրակոյտին եզերքը գտայ գաջն : Ետո գարծնացած երեցու զիս տեսնելով և բաւական խիտ կերպով հարցուց ինձի թէ ի՞նչ կ'ընէի հին : Ասկէ առաջ եկաւ վէճ մը , որ նախատական խօսքերով և դրէթէ հարուածներով վերջացաւ , վարնդի հայրս խիտ բուռն նկարագիր մը ունէր : Տեսնելով որ ստատիկ բարկացած է , բաժնուեցայ իրմէ և դէպի Հաթիէրէյի ապարակը ուղղուեցայ : Հարիւր յիսուն մէտրէ աւելի

հեռացած չէի երբ ետեւէս ստակալի աղաղակ մը լսեցի և վազելով ետ դարձայ : Տեսայ որ հայրս գեղինը փռուած էր մահամերձ և զգիլն վրայ ստակալի վէրք մը ունէր : Հրացանըս ձգեցի և հայրս թեւերուս մէջ առի : Բայց գրէթէ նոյն պահուն հողին աւանդեց : Քանի մը վազելեան ծնրադրեցի անոր քով և յետոյ օգնութիւն փնտսելու համար վազեցի Մր. Քրքնըրի դռնապանին մօտ , որ այդ տեղուսն ամէնէն մօտ տանը մէջ կը բնակէր : Հօրս քով մարդ տեսած չէի և չեմ գիտեր ի՞նչ բանի վերադրել իր վէրքերն ու մանր : Քաղաքէն մէջ ժողովրդական չէր իր արտաքին պաղ և քիչ համակրելի երեւոյթին պատճառաւ , բայց չէի ձանչնար մէկը , որ թշնամի ըլլար անոր : Ուրիշ բան չեմ գիտեր :

- « Պատակաւ պատճօնեալ . — Ձեր հայրը մեանելէն առաջ յայտարարութիւն մը չըրա՞ւ :
- « Վ. կան . — Քանի մը խօսքեր միմեաց , որոնց մէջ տարտամօրէն լսեցի մուկի ակնարկութիւն մը :
- « Դ. — Ի՞նչ եղբակացուցիք աղկէ :
- « Վ. — Ինձի համար ո՛ր և է իմաստ չունէր և կարծեցի թէ զառանցանքի արդիւնք մըն է :
- « Դ. — Ի՞նչ էր նիւթը այն բունն վիճարանութեան , զոր ունեցաք ձեր հօրը հետ :
- « Վ. — Ետխամեմար կը համարեն լուսթիւն պահել այդ կէտին վրայ :
- « Դ. — Ստիպուած եմ պնդել , զիտնալու համար :
- « Վ. — Ինձի համար ստուգիլ անկարելի է այդ բանը ըսել ձեզի : Մա՛ միայն կրնամ հաւատտել թէ տանջութիւն մը չունի այն ստակալի տառնին հետ , որ այդ վիճարանութեանէն ետքը տեղի ունեցաւ :
- « Դ. — Դատարանը որոշում պիտի տայ այս կէտին վրայ : Աւելորդ է ըսել , այնպէս չէ՞ , թէ այս հարցումին չպատասխանելու ձեր պնդումը մեծապէս պիտի ծանրացնէ ձեզի դէմ եղած ապացոյցները :
- « Վ. — Կը պնդեմ մերժումին վրայ :
- « Դ. — Ըսիք թէ « քուհի » աղաղակը սովորական նշան մըն էր ձեր հօրը և ձեր միջեւ :
- « Վ. — Այո՛ :
- « Դ. — Այն ատեն ի՞նչպէս կ'ըլլայ որ անիկա այս աղա-

դակը արձակած ըլլայ ձեզ տեսնել և նոյն իսկ գիտնալէ առաջ թէ Պրիսթօրէն դարձած էիք :

«Վ. (Շատ յուզուած).— Չեմ գիտեր :

«Յրդուեալ մը.— Աղաղակը լսելէ և մահացու կերպով վերաւորուած ձեր հայրը գտնելու համար ես գտնեալէ վերջ չտեսիք բան մը որ կարենար ձեր կասկածները արթնցնել :

«Վ.— Որոչ բան մը չտեսայ :

«Բ.— Ի՞նչ կը հասկնաք ատով :

«Վ.— Ի՛նչպիսի ջրակոյտը վազած ատենս անհշտօք ալլայլալով և յուզուած էի որ հօրմէն զատ ուրիշ բանի վրայ չէի խորհեր : Սակայն սա տարտամ ազաւորութիւնը ունիմ թէ մօտեցած ատենս ձախ կողմը , գեանին վրայ գորշագոյն առարկայ մը կար , որ կրնար վերարկու մը , թերեւ ուղեւորութեան վերմակ մը ըլլայ : Երբ հօրս քովէն ելայ , այդ առարկան փնտաւցի , բայց անհետացած էր :

«Բ.— Ըսել կ'ուզէք թէ օգնութիւն փնտաւելու համար ձեր երթալէն առաջ անհետացած էր :

«Վ.— Այո՛ :

«Բ.— Չէք կրնար հաստատել թէ ի՞նչ էր այդ առարկան :

«Վ.— Ո՛չ : Այն զգացումը ունիմ թէ հոն առարկայ մը կար : Այսչափ :

«Բ.— Ի՛նչպէս ո՞րչափ հեռու էր :

«Վ.— 12 մէդրի շափ :

«Բ.— Անտառին եզերքէն ո՞րչափ հեռու էր :

«Վ.— Գրէթէ նոյնչափ հեռու :

«Բ.— Ուրեմն , եթէ այդ առարկան վերցուած է , ձեր հոն գտնուած և 12 մէդր միայն հեռու եղած միջոցին վերցուած է :

«Վ.— Այո՛ , բայց ես կանակն այդ առարկային դարձուցած էի :

Այսպէս վերջացաւ վկային հարցաքննութիւնը) :

— Կը կարծեմ թէ , ըսի յօդուածը նորէն կարգալով , դատական պաշտօնեան խիստ վարուած է երկատարող Մաք Քարթիի հետ : Կը պնդէ , եւ իրաւամբ , սա հակասական եղելութեան վրայ թէ հայրը կանչեր է եզերք , զինք տեսնելէ առաջ : Կը շեշտէ նաև տղուն մերժումը՝ հօրը հետ իր խօսակցութեան վրայ մանրամասնութիւն չտալու մասին և վեր-

ջապէս անոր ատարինակ վկայութիւնը մահամերձին արտասանած վերջին խօսքերուն վրայ : Ի՛նչպէս կուտայ թէ ասանք ամբաստանեալին դէմ ապացոյցներ են :

Հօրմս չարամտօրէն խնդաց և վակոնին մետաքսեայ բարձին վրայ ընկողմանեցաւ :

— Երկուքդ ալ՝ դատական պաշտօնեան և դուք՝ ճշմարիտ ջանք մը կ'ընէք , ըսաւ , երեւան բերելու համար այն գլխաւոր ամբաստանութիւնները , որոնք երկատարողին համար ամէնէն նպատաւորներն են : Չէք տեսներ թէ փոփոխակի անոր կը վերագրէք շատ երեւակայութիւն կամ ո՛չ բաւական : — Ո՛չ բաւական , քանի որ կարող չէ վէճի մասին բան մը հնարել , որ երգուեալ դատաւորներուն համակրութիւնը պիտի շահեցնէր իրեն , — չա՛տ , քանի որ խղճմտօրէն կը յիշատակէ մահամերձին մուկի մը ըրած ակնարկութեան չափ արտասույթը բան մը կամ անհետացող վերարկուի մը գէշքը : Ուրեմն կը սխալիք : Ես ընդհակառակը կ'ենթադրեմ թէ երկատարողը ճիշդ կ'ըսէ և պիտի տեսնենք թէ ո՛ւր պիտի տանի մեզ այս ենթադրութիւնը : Հիմակ ահաւաստիկ զբոյժանի Բէկրարքս , որուն ընթերցման մէջ պիտի մխրձուիմ : Այս գործին վրայ այլ ևս խօսք մը մը՝ ընէք , կ'աղաչեմ , մինչեւ որ գործողութեան վայրը համենք : 20 վայրկեանէն պիտի ճաչենք Առխարնի մէջ :

Փամը գրէթէ չորսն էր երբ Սթրասուտի գեղեցիկ հովիտը և Սէվըրնի հայեթիւնման ջուրերը անցնելէ ետք , վերջապէս հասանք Բօսի սղտիկ սիրուն քաղաքը :

Կայարանին քարափին վրայ , մեզի կը սպասէր նուրբ մարմինով և կուզի (սամուարի) երեւոյթով մարդ մը , որ Լէսթրատն էր , ոտիկանութեան պաշտօնատուէն : Կառքով տարինք գահն Հիրֆօրտ օթէյ , ուր սենեակ մը վարձած էին մեզի համար :

— Կառք մը ապապրեցի ձեզ , ըսաւ Լէսթրատ , մինչ զաւաթ մը թէյ կը խմէինք : Ի՛նչպիսի մէք գործունէութիւնը , խորհեցայ թէ հանդիստ պիտի չըլլայիք մինչեւ որ չտեսնէիք ո՞՞րքին վայրը :

— Ձեր ըրածը շատ հաճելի և փաղաքշական է , պատեանեց Հօրմս : Զերմաշտիական ճշմո՞թի խնդիր մըն է Կապէս :


Լէսթրատ զարմացաւ :


— Ազէկ չահակցայ, բաւ :

— Ի՞նչ կ'ըսէ ջերմաչափը. — 29, կը տեսնեմ: Հով չկայ, երկինքին վրայ ամպ չկայ: Հոս տուփ մը պատրաստ սիկաւ ներ ունիմ, որոնք ծխուելու կ'սպասեն և այս բազմոցը շատ աւելի կակուղ է քան դեղձի կուտերով խմկուած կանկրը, որոնց սովորաբար կը հանդիպինք պղտիկ քաղաքներու այս պանդակներուն մէջ: Մտադիր չեմ կառք գործածել այս իրիկուն:

Լէսթրատ ժպտեցաւ ներողամտութեամբ:

— Լրագիրներուն համեմատ կարծիք մը կազմած էք, բաւ: Գործը վիճարուի ջուրի չափ պայծառ է և քանի՜ ուսումնասիրուի, այնքան պարզ կ'ըլլայ: Սակայն կարելի չէ մերժել կնոջ մը, մանտանդ այնքան հաստատամբ կնոջ մը ինչ որ կը խնդրէ ձեզմէ: Ձեր խօսքը իմացած էր և ամէն պորագայի մէջ կ'ուզէր ձեր կարծիքը իմանալ, թէ և քանիցս կրկնեցի իրեն թէ ինչմէ աւելի բան մը պիտի չընէիք: Իրաւ որ կարծեմ թէ իր կառքն է վարը, դրան առջեւ:





ԳԻՆ 10 ՂՐՇ.

Տպագրութիւն	Հրատարակիչ
Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՈՐԴԵՐ	ՅԱԿՈԲ ԱՐՄԱՅՈՒՄԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ	Պոպ-Այի ճանտեօյ Բեօիս Էճ. Խան

ԿԵՐ-

«Ազգային գրադարան»



NL0166860

